



ԲԺՇԿԱՊԵՏ ԱՐՏԱԾԵՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԲՈՒԴՈՒՂԵԱՆ

Ծն. Ախալցխա 20 դեկտ. 1864 թ. † Պետրոպոլս 10 ապրիլի 1915 թ.

Երևեցաւ նա և չքացաւ... Նա ծնուել է հայ նահապետական ընտանիքում, Ախալցխայում, ուր միջնակարգ դպրոցներ անգամ չըկային, շրջապատուած մաքուր մթնոլորտով ու պարզութեամբ. հէնց այս պարզ ու մաքուր պատգամներով ու հոգու անսահման սիրով նա ապրեց մեզ հետ և չքացաւ մեզանից: Նա անյայտացաւ՝ հիւժուած ծանր հիւանդութիւնից, ճշմարտութեան մեծ կռուի մէջ, սակայն անյաղթելի հոգւով մնալով մինչև մահը մաքուր, պայծառ և ուժեղ:

Բուդուղեանի բժշկական գիտութիւնը սերտ կապուած է յայտնի ողու սիֆիլիզօլօգ պրօֆեսօր Տարնովսկու անուան հետ, որը սիրեց Բուդուղեանին և եղաւ նրա առաջին քայլերի ուղեցոյցը: Գիտութեան այն բոլոր հոսանքները, որ տիրապետում էին Բուդուղեանի առաջին քայլերում՝ յափըշտակեցին նրան և նա ինչպէս մի ամբողջութիւն անձնատուր եղաւ սիրած գործին և աշխատում էր պարզաբանել գիտութեան մութ կողմերը: Վեներական հիւանդութիւնները, սրանց զանազան արտայայտութիւններն այն ժամանակ դեռ այնքան պարզ չէին ուսումնասիրուած. և այդ ասպարիզում մեծ դեր էին խաղում Բիկորի, Ֆուրնիէյի և այլ հանճարեղ գիտնականների յայտնած մտքերը: Բուդուղեանը գիտում էր հիւանդութեան զանազան նշանները, ամենախոր կերպով թափանցում էր ախտաբանութեան խորքեր, որ ուրիշ գիտողի համար կարող էին մինչև անգամ աննկատելի լինել: Պրօֆեսօր Տարնովսկու կլինիկաներում Ա. Բուդուղեանը ղեկավարում էր ուսանողների

գործնական պարապմունքները. նրա աշակերտներից շատերը ստեղծեցին գիտութեան մէջ շատ փայլուն դիրք, իսկ ինքն ուրախանալով իր աշակերտների յառաջադիմութեամբ՝ չը ստեղծեց իր համար գիտութեան մէջ պաշտօնական դիրք: Նա նախ և առաջ գործնական բժշկէ էր և շատ առոյգ բնութեան տէր մարդ. նա չը ցանկացաւ իրան նուիրել միմիայն զուտ գիտութեանը: Ղեկավարել ուսանողութեան գործնական պարապմունքները, բուժել անթիւ ու անհամար հիւանդներ՝ ահա այն կենդանի գործը, որին նուիրել էր Ա. Բուդուղեանը իր հոգու ուժերը: Նրա բազմաթիւ աշակերտներն ու հիւանդները միշտ գնահատել են այն դիտողութեան ոյժը և այն ահագին փորձը, որոնց շնորհիւ Բուդուղեանը ներկայանում էր իբրեւ առաջնակարգ կլինիցիստ: Մարդիկ առհասարակ գրաւելով արտաքին փառքով, չեն ցանկանում ճանաչել իրանց ուժերը և իրանց հոգեկան ձգտումները: Սրանք աշխատում են կատարել այն գործերը, որ տալիս են ոչ թէ հոգու բաւարարութիւն, այլ արտաքին փառք: Բուդուղեանը գործին նուիրուելով փառքի կամ նիւթական հաշիւներից հեռու էր. նա կատարում էր այն գործը, որ տալիս էր իրան ներքին բաւարարութիւն: Չը բաւականանալով միմիայն բժշկական գործունէութեամբ՝ Բուդուղեանի կենդանի հոգին որոնում էր հասարակութեան լայն շրջաններ, ուր նա կարող էր աւարածել գիտութեան լոյսը: Բուդուղեանի մատչելի լեզուով գրուած գրքոյկները ամենապարզ կերպով ծանօթացնում են հասարակ ընթերցողին գիտութեան վերջին խօսքի հետ առողջապահութեան և զանազան հիւանդութիւնների վերաբերեալ:

Առողջապահութեան Բուդուղեանը մի առանձին ուշադրութիւն էր դարձնում. դա մի գիտութիւն էր նրա համար, որի միջոցաւ հիւանդութիւնն ինքն ըստ ինքեան պիտի չքանար: Բուդուղեանի առողջապահութիւնը վեներական հիւանդութիւնների շրջանում միևնոյն ժամանակ և մի բարոյական մաքրութեան քարոզ է: Բժշկականութեան մէջ ամեն մի աչքի ընկնող հարց Բուդուղեանի

համար նիւթ էր, որի մասին նա չէր կարող չը գրել: Նրա գրքոյկներում շօշափւում են նոյնպէս և հասարակական հարցեր: Լինելով մեծ մասնագէտ բժիշկ, նա թափանցում էր նոյնպէս կեանքի և գիտութեան զանազան այլ կողմերը:

Բուդուղեանը նախ մարդ էր բառիս բուն նշանակութեամբ և բացի դրանից մեծ ազգասէր: Սրա ազգասիրութիւնը խոռովութեան և անհաշտութեան աղբիւր չէր իր համար, նա ջերմ սիրում էր ազգը և յարգում օտար ազգերի արժանաւորութիւնները: Հասարակական գործունէութեան մէջ նա թշնամի էր կուսակցութեան. «Ծշմարիտ գործ կստարողը, ասում էր նա, պէտք է զիջանէ եւ ընդունէ հակառակորդի կարծիքը այն դէպքում, երբ գործի համար աւելի նպաստաւոր է»:

Բուդուղեանի ուսանողութեան տարիները շատ ծանր էին նիւթականի կողմից, զանազան զրկանքներ, ծանր աշխատանք, բանտարկութիւն և անվերջ կռիւ ճշմարտութեան համար՝ սպառեցին նրա ուժերը և նա այլևս չը կայ...

Բուդուղեանի անունը մի փայլուն էջ է հայոց ինտելիգենցիայի պատմութեան մէջ. հանգաւ նրա աստղը, բայց կենդանի է նրա գեղեցիկ հոգին, որ իր անսպառ ուժերը նուիրել էր հիւանդ մարդկութեան, հասարակական հարցերին և լուսաւորութեան: Թէ ռուս և թէ հայ հասարակութիւնը միշտ գնահատել և սիրել է Բուդուղեանին, և այն գաղափարները, որոնց նա ծառայել է, պէտք է նուիրական լինեն ամեն մտածող մարդու համար:

Հանգիստ նրա ոսկորներին, անմահութիւն նրա յիշատակին:

Պրոֆեսոր Կ. Աղաջանեանց:

«Տարակ»